



## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 32\_Լ

06 դեկտեմբերի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 18\_Լ ՈՐՈՇՄԱՄԲ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5)-րդ ենթակետով ու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի 18\_Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում կատարել հետևյալ լրացումը.

ա) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ստեղծել «ԵՊՀ ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանումը և հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի նոյեմբերի 24-ի թիվ 3/3 որոշմամբ ընդունված առաջարկությունը:

2. Սույն որոշումը հանդիսանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18\_Լ որոշման անբաժանելի մասը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝**

**Ս. Պապիկյան**

2022թ. դեկտեմբեր «06»

Երևան